ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-20-8/4-2

ք. Երևան 04.06. 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ -ը, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ծառայության մատուցման արդյունքում ստացված ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1335429 (մեկ միլիոն երեք հարյուր երեսուն հինգ հազար չորս հարյուր քսանինը) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ,

քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Դավիթ Քոչարյան» Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արգիշտի փ., 11/3 բն. 32
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2471202340560000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 37488199
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Դ. ՔՈՉԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-8/4-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի		
չ/հ	**անվանումը**	**տեխնիկական բնութագիրը**
1	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Փաստաթղթերի մուտքի հաշվառման մատյան /	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2 -րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից, հայերեն: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
4	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Փաստաթղթերի ելքի հաշվառման մատյան /	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2 -րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից, հայերեն: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տրիչ մատյան/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 20,0x 14,5սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում : Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
10	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մեքենագրված փաստաթղթերի հաշվառման մատյան/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2 -րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից, հայերեն: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
11	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Կնիքների և դրոշմակնիքների հաշվառման մատյան/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
13	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ծրարների հ/մ/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2 -րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից, հայերեն: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով,2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
17	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Նոթատետր/	60 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 14,5x20,0սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 70գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին թերթի շարունակական կրկնությունից: Կազմը՝

		տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 350գ զանգվածով թղթով, գունավոր, կպցված բլոկի կոնակին 14,0սմ երկարությամբ մետաղյա զսպանակով : Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
18	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Քարտատուփ/	Պատրաստի արտադրանքի չափսը՝ 24,0x33,0x14,0 սմ, պատրաստված 1,75մմ հաստությամբ կազմարարական ստվարաթղթով՝ անկյունները դրսից և ներսից գործվածքով կամ բումվինիլով ամրացված: Պատրաստել՝ ըստ մակետային նմուշի:
22	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Կատարումների հսկողության մատյան/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթից, կպցված բլոկի կոնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
52	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Էլեկտրական մարտկոցների /անվադողերի/ դուրսգրման ակտ, ձև 11ա/	Չափսը՝ 14,5x20,5 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
60	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /ՀՀՍ ծառայության նյութերի,առանց տարայի պահեստամասերի /ՁԻՊ / և ունեցվածքի հաշվառման մատյան,ձև 26ա/	100 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 41,0x29,2 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2-րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթով, կպցված բլոկի կոնակին վրակար եղանակով՝ մետաղալարով, կոնակը՝ բումվինիլով, 4 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
62	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տեղադրման ակտ/	Չափսը՝ 20,5x29,5 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով,միագույն, օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
71	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Դարակապիտակ ձև 64 ՀՀՍ/	Չափսը՝ 14,5x21,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 160գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
72	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Դարակային /դարակաշարային/ պիտակ,ձև 64ա/	Չափսը՝ 14,5x21,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 160գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:

Ծանոթություն՝ Էլեկտրոնային ֆայլերը կուղարկվեն պայմանագրի կնքումից հետո հինգօրյա ժամկետում մատակարարի տրամադրված էլեկտրոնային հասցեին, իսկ բնագրանմուշները՝ մատակարարի՝ պատվիրատուին դիմելուց հետո տասնօրյա ժամկետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դավիթ Քոչարյան» Ա/Ձ

Դ. ՔՈՉԱՐՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը 2020թ. հունիս-հուլիս
1	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Փաստաթղթերի մուտքի հաշվառման մատյան /	հատ	333	229	76257	333
4	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Փաստաթղթերի ելքի հաշվառման մատյան /	հատ	305	247	75335	305
8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ցրիչ մատյան/	հատ	522	124.5	64989	522
10	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մեքենագրված փաստաթղթերի հաշվառման մատյան/	հատ	128	247	31616	128
11	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Կնիքների և դրոշմակնիքների հաշվառման մատյան/	հատ	137	247	33839	137
13	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ծրարների հ/մ/	հատ	189	247	46683	189
17	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Նոթատետր/	հատ	569	239	135991	569
18	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Քարտատուփ/	հատ	61	1190	72590	61
22	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Կատարումների հսկողության մատյան/	հատ	203	247	50141	203
52	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Էլեկտրական մարտկոցների /անվադողերի/ դուրսգրման ակտ, ձև 11ա/	հատ	15800	1.64	25912	15800
60	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /ՀՀՀՍ ծառայության նյութերի.առանց տարայի պահեստամասերի /ՁԻՊ / և ունեցվածքի հաշվառման մատյան.ձև 26ա/	հատ	700	795	556500	700
62	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տեղադրման ակտ/	հատ	40000	3.09	123600	40000
71	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Դարակապիտակ ձև 64 ՀՀՍ/	հատ	5000	4.24	21200	5000
72	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Դարսակային /դարակաշարային/ պիտակ.ձև 64ա/	հատ	4900	4.24	20776	4900

Ծանոթություն՝ Ծառայության արդյունքը մատակարարվելու է ՀՀ ք. Երևան, Բագրևանդի 5, ՀՀ ՊՆ տարածք:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դավիթ Քոչարյան» Ա/Ձ

Դ. ՔՈՉԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-8/4-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝						
հ/հ	անվանումը	CPV կոդը	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Փաստաթղթերի մուտքի հաշվառման մատյան /	79821200/2	76257	76257	76257	76257	76257	76257	76257
4	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Փաստաթղթերի ելքի հաշվառման մատյան /	79821200/5	75335	75335	75335	75335	75335	75335	75335
8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ցրիչ մատյան/	79821200/9	64989	64989	64989	64989	64989	64989	64989
10	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մեքենագրված փաստաթղթերի հաշվառման մատյան/	79821200/11	31616	31616	31616	31616	31616	31616	31616
11	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Կնիքների և դրոշմակնիքների հաշվառման մատյան/	79821200/12	33839	33839	33839	33839	33839	33839	33839
13	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ծրարների հ/մ/	79821200/14	46683	46683	46683	46683	46683	46683	46683
17	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Նոթատետր/	79821200/18	135991	135991	135991	135991	135991	135991	135991
18	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Քարտատուփ/	79821200/19	72590	72590	72590	72590	72590	72590	72590
22	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Կատարումների	79821200/23	50141	50141	50141	50141	50141	50141	50141

	հսկողության մատյան/								
52	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Էլեկտրական մարտկոցների /անվադողերի/ դուրսգրման ակտ, ձև 11ա/	79821200/53	25912	25912	25912	25912	25912	25912	25912
60	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /ՀՀՍ ծառայության նյութերի,առանց տարայի պահեստամասերի /ԶԻՊ / և ունեցվածքի հաշվառման մատյան,ձև 26ա/	79821200/61	556500	556500	556500	556500	556500	556500	556500
62	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տեղադրման ակտ/	79821200/63	123600	123600	123600	123600	123600	123600	123600
71	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Դարակալիտակ ձև 64 ՀՀՍ/	79821200/72	21200	21200	21200	21200	21200	21200	21200
72	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Դարսակային /դարակաշարային/ պիտակ,ձև 64ա/	79821200/73	20776	20776	20776	20776	20776	20776	20776

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դավիթ Քոչարյան» Ա/Ձ

Դ. ՔՈՉԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-20-8/4-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն